

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում բացվեցին դասարաններ՝ հերոսներ Կարենի և Վահագնի անուններով: Միջոցառմանը ներկա գտնվողները մեծ հիացմունքով և հպարտությամբ էին խոսում հերոս տղաների մասին: Այդ օրը Կարենի ծննդյան օրն էր: Տղաները կովեցին և զոհվեցին հանուն իրենց հայրենիքի, հանուն այն հայրենիքի, որը հիմա մենք ունենք: Եվ պատգամեցին, որ մենք ապրենք, արարենք և հզորացնենք մեր հայրենիքը: Մենք շատ կցանկանայինք, որ Կարենը և Վահագնը հիմա մեր կողքին լինեին, բայց նրանց հիշատակը հավերժ պահելու համար պարտավոր ենք պայքարել և ապրել այնպես, որ հետագայում այլևս չկորցնենք նման հերոսների, դրա համար մեր պարտքն է , որ մեր հասարակությունը ունենա կրթվածության բարձր մակարդակ և գիտելիքներ բոլոր բնագավառներում, որպեսզի ունենանք լավ մասնագետներ, ու եթե հանկարծ նորից սկսվի....., իրենց փոխարեն կռվեն տեխնոլոգիապես զարգացած տեխնիկաները, որ ցանակացած պայքարում մարդկային զոհերը քիչ լինեն: